

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԵՐԵԶՎԱԿԱՆ ԿԱՐՅՎԱՆ

# «ԵԳԴԻԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԶԵՈՆԱՐԿ

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ  
ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

**ԹԵՐԵԶԱ ԱՄՐՅԱՆ**

**«ԵԶԳԻԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»**

*Ուսումնամեթոդական չեռնարկ*

**ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2018**

ՀՏԴ 94:2:391/395  
ԳՄԴ 63.3+86+63.5  
Ա 536

*Հրատարակվում է ԵՊՀ արևելագիտության  
ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

### **Ամրյան Թ.**

Ա 536 «Եզդիագիտություն»: Ուսումնամեթոդական ձեռնարկ/Թերեզա Ամրյան, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ, իրանագիտության ամբիոն, -Եր., ԵՊՀ հրատ., 2018, 40 էջ:

Ձեռնարկում համապարփակ կերպով ներկայացված է ԵՊՀ իրանագիտության ամբիոնի մագիստրատուրայի 2-րդ կիսամյակում դասավանդվող «Եզդիագիտություն» առարկայի կառուցվածքը: Դասընթացն ուսանողներին հնարավորություն է տալիս ուսումնասիրելու իրանալեզու էթնոլոգիական հանրություններից մեկի՝ եզդիական համայնքի կրոնական յուրահատկությունները՝ այն համեմատության մեջ դնելով արդեն իսկ ուսանողին ծանոթ իրանալեզու և ոչ իրանալեզու կրոնական և էթնոլոգիական այլ հանրությունների հետ: Դասընթացը կրում է տեսական բնույթ: Այն հիմնված է դասախոսի կողմից ներկայացվող դասախոսությունների, ինչպես նաև ուսանողների ինքնուրույն, անհատական և խմբային աշխատանքի վրա:

Ձեռնարկը նախատեսված է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի մագիստրատուրայի ուսանողների, ինչպես նաև կրոնների պատմությանը և համեմատական կրոնագիտությանը հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 94:2:391/395  
ԳՄԴ 63.3+86+63.5

ISBN 978-5-8084-2287-2

© ԵՊՀ հրատ., 2018  
© Ամրյան Թ., 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասընթացի նկարագիրը.....	5
Դասավանդման մեթոդաբանությունը .....	6
Դասընթացի նպատակն ու խնդիրները.....	6
Կրթական արդյունքները.....	8
Դասավանդման և ուսումնառության մեթոդները.....	8
Դասընթացի ստուգման և գնահատման պահանջները .....	10
Առարկայի թեմատիկ պլանը .....	11
Դասընթացի բովանդակությունը՝ ըստ թեմաների .....	12
Թեմա 1.....	12
Թեմա 2.....	12
Թեմա 3.....	13
Թեմա 4.....	13
Թեմա 5.....	14
Թեմա 6.....	14
Թեմա 7.....	15
Թեմա 8.....	16
Թեմա 9.....	16
Թեմա 10.....	17
Թեմա 11.....	17
Թեմա 12.....	18
Թեմա 13.....	18
Թեմա 14.....	19
Թեմա 15.....	19
Թեմա 16.....	20
Դասընթացի համառոտ բովանդակությունը՝ ըստ ուսումնառության շաբաթների.....	22
1-ին շաբաթ.....	22
2-րդ շաբաթ.....	22
3-րդ շաբաթ.....	23
4-րդ շաբաթ.....	23
5-րդ շաբաթ.....	23
6-րդ շաբաթ.....	24
7-րդ շաբաթ.....	24
8-րդ շաբաթ.....	25
9-րդ շաբաթ.....	25
10-րդ շաբաթ.....	26
11-րդ շաբաթ.....	26

12-րդ շաբաթ.....	27
13-րդ շաբաթ.....	27
14-րդ շաբաթ.....	28
15-րդ շաբաթ.....	28
16-րդ շաբաթ.....	28
1-3 շաբաթներ.....	29
4-5 շաբաթներ.....	31
6-8 շաբաթներ.....	32
9-11 շաբաթներ.....	34
12-16 շաբաթներ.....	35
Գրականության ցանկ.....	37

## **Դասընթացի նկարագիրը**

«Եզդիագիտություն» առարկան դասավանդվում է ԵՊՀ իրանագիտության ամբիոնի մագիստրատուրայի 2-րդ կիսամյակում: Առարկայի դասավանդմանը տրամադրվում է շաբաթական 2 ժամ (կիսամյակի ընթացքում 32 ժամ):

«Եզդիագիտություն» առարկան ուսումնասիրում է եզդիականությունը՝ սկսած դրա ձևավորումից, զարգացումից, տարածումից մինչև արդի ժամանակաշրջանում դրա ունեցած կրոնական, փիլիսոփայական և գաղափարական առանձնահատկությունները:

«Եզդիագիտություն» առարկայի կարևորությունը հետզհետե մեծանում է՝ կապված ժամանակակից աշխարհում տեղի ունեցող կրոնականադարձական իրադարձությունների և գործընթացների հետ: Ուստի դասընթացի՝ իրանագիտության ամբիոնի դասացանկում առկա լինելը պայմանավորված է ոչ միայն թեմայի գիտական և ակադեմիական հետաքրքրությամբ, այլև դրա արդիականությամբ:

Եզդիականությունը, ստեղծվելով սուֆիական հիմքի վրա, ներառել է նաև հին իրանական, տեղական մի շարք հավատալիքներ, ծայրահեղ շիայական հանրույթներին, ինչպես նաև գնոստիցիզմին հասուկ որոշ տարրեր:

Եզդիականությունը ծագել է ներկայիս Իրաքի հյուսիսում գտնվող Լալիշի կիրճում: Եզդիները ժամանակի ընթացքում տարածվել են Մերձավոր և Միջին Արևելքի տարբեր երկրներում՝ հասնելով մինչև Հայկական լեռնաշխարհ: Եզդիների մի հատվածը ժամանակի ընթացքում բնակություն է հաստատել ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում:

Ներկայումս եզդիներ բնակվում են նաև Վրաստանի, Թուրքիայի և Սիրիայի տարածքում. վերջին մի քանի տասնամյակների ընթացքում եզդիական համայնքներ են ձևավորվել նաև Ռուսաստանի Դաշնությունում, եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում և Ավստրալիայում:

Կարելի է վստահորեն ասել, որ դասընթացը, իրանագիտության մաս կազմելով հանդերձ, ներառում է շատ ավելի լայն հորիզոններ:

## **Գ-ասավանդման մեթոդաբանությունը**

«Եզդիագիտություն» առարկան ուսանողի համար ամուր հիմք է ոչ միայն եզդիագիտության, այլև հետագայում իրանալեզու և ոչ իրանալեզու տարբեր էթնոլավանական հանրույթների կրոնական հավատալիքների տարբեր կողմերն ուսումնասիրելու և հետազոտելու համար:

Իրանագիտության ամբիոնում առարկայի դասավանդման մեթոդական մասը մշակվել է դասընթացի ծրագրի հեղինակի կողմից. այն հիմնված է սկզբնաղբյուրների և ակադեմիական առկա ուսումնասիրությունների վրա: Եզդիականության ուսումնասիրումը կատարվում է տարբեր աղբյուրների, ինչպես նաև եզդիական բանավոր ավանդույթի համադրման միջոցով:

Եզդիականությունն ուսումնասիրելիս ուսանողը ծանոթանում է նաև սուֆիական եղբայրակցությունների, մերձավորարևելյան մի շարք կրոնական հանրույթների կրոնագաղափարական և փիլիսոփայական համակարգերի հետ, որոնք առնչվում են եզդիականությանը և ժամանակին կարևոր դեր են խաղացել եզդիականության ձևավորման գործում:

Առարկայի դասավանդումն իրականացվում է թեմային առնչվող իրանագիտական, կրոնագիտական, եզդիագիտական, իսլամագիտական բազմալեզու գրականության կիրառմամբ:

## **Գ-ասընթացի նպատակն ու խնդիրները**

«Եզդիագիտություն» առարկայի ուսումնասիրության գործում կարևորվում են ուսանողների կրոնագիտական գիտելիքների ու մեթոդների համակարգումն ու զարգացումը: Տվյալ դասընթացը եզդիականության համակողմանի ուսումնասիրությունն է՝ ըստ համապատասխան գիտական, ակադեմիական աղբյուրների ու մեթոդների: Ուստի ուսումնառության ընթացքում հետամուտ ենք լինում հետևյալ նպատակներին ու խնդիրներին.

1. ուսանողներին ներկայացնել եզդիականության ուսումնասիրման պատմությունը, եզդիների և նրանց կրոնի մասին վաղ հի-

- շատակությունները, եզրիականությանը և եզրիներին առնչվող առաջին գրավոր աղբյուրները,
2. ուսանողներին իրազեկել եզրիականության ձևավորման պատմության, զարգացման փուլերի, տարածման, ինչպես նաև արդի վերափոխումների մասին,
  3. ուսանողներին տրամադրել խոր և համակողմանի գիտելիքներ Մերձավոր Արևելքի եզրիական համայքների կրոնական առանձնահատկությունների և եզրիական սրբավայրերի մասին,
  4. դիտարկել, լուսաբանել և լսարանում քննարկել եզրիականության ուսումնասիրությանը նվիրված գիտական աշխատանքները,
  5. պարզել էթնոլավանական տարբեր հանրությունների կրոնական, ինչպես նաև առանձին սուֆիական տարրերի ազդեցությունները եզրիականության վրա,
  6. ցույց տալ և վերլուծել եզրիականության տեղն ու դերը Մերձավոր Արևելքի ազգային և կրոնական հանրությունների շարքում,
  7. զարգացնել և խրախուսել ուսանողների ինքնուրույն հետազոտություններ ու գիտական աշխատանքներ կատարելու հմտությունները կրոնագիտության, մասնավորապես, եզրիագիտության բնագավառում,
  8. լսարանում կատարվող քննարկումների ու վերլուծությունների արդյունքում ձևավորել և համակարգել ուսանողի կողմից ինքնուրույն համեմատություններ և ընդհանրացումներ անելու, վերլուծելու և եզրակացությունների գալու հմտությունը, որի շնորհիվ ուսումնասիրվող նյութը կդառնա առավել պատճառաբանված ու տրամաբանական,
  9. վերլուծությունների արդյունքում քննարկումներ կազմակերպել ուսանողների, ինչպես նաև ուսանողների ու դասախոսի միջև, ինչը ենթադրում է միմյանց լսելու, կարծիքներ փոխանակելու, քննարկելու հնարավորություն ու այդ հմտությունների կատարելագործում:



## **Կրթական արդյունքները**

Դասընթացի ավարտին ուսանողը պետք է.

- ✓ պատկերացում ունենա մերձավորարևելյան կրոնական խճանկարում եզրիականության տեղի և դերի մասին,
- ✓ պատկերացնի եզրիականության էությունը, դրա առանձնահատկությունները, ի վիճակի լինի մատնանշել դրա առաջացման և ձևավորման գործում կարևոր դեր ունեցող հանգամանքներն ու իրողությունները,
- ✓ կարողանա մատնանշել պատմական որոշակի ժամանակահատվածում եզրիականության ձևավորման նախադրյալները, դրա առաջացմանը նպաստող ազդակներն ու պայմանները,
- ✓ կարողանա նկարագրել ժամանակակից մերձավորարևելյան կրոնաքաղաքական իրավիճակում եզրիականության ունեցած դերն ու ազդեցությունը,
- ✓ կարողանա պատկերացնել եզրիականության արդի վիճակը, կարողանալ կանխատեսել եզրիականության հետագա զարգացումը և դրա հնարավոր վերափոխումները,
- ✓ կարողանա ստացած գիտելիքների հիման վրա ավելի խորացնել և հարստացնել իր հմտությունները եզրիագիտության ոլորտում,
- ✓ կարողանա կատարել հետազոտական աշխատանք եզրիագիտության բնագավառում,
- ✓ կարողանա կիրառել իր գիտելիքները համեմատական և պատմական ու համեմատական կրոնագիտության մեջ,
- ✓ կարողանա օգտվել էլեկտրոնային լրատվամիջոցներից, դաշտային ազգագրական նյութից և այլ աղբյուրներից ու կիրառել ստացած տեղեկույթը գիտական աշխատանք կատարելու համար:

## **Դասավանդման և ուսումնառության մեթոդները**

Դասընթացը կրում է տեսական բնույթ: Այն կազմված է դասախոսի կարդացած դասախոսություններից, նյութը ուսանողի հետ քննար-

կելուց և անհատական աշխատանքներից: Նախատեսվում է դասապրոցեսի կառուցման հետևյալ հաջորդականությունը՝ դասախոսի կողմից կարդացվող դասախոսություն, նյութի վերլուծություն, ուսանողների հետ ընդհանուր քննարկումներ, անհատական գրավոր աշխատանքներ՝ առանձին թեմաների վերաբերյալ: Դասընթացը կազմակերպվում է կազմակերպչական-մեթոդական հետևյալ համակարգով.

- ✓ դասախոսություն,
- ✓ ֆիլմերի տեսանյութերի դիտում (տեսանյութեր, վաստագրական, վավերագրական ֆիլմեր, թեմային նվիրված հեռուստահաղորդումներ),
- ✓ խմբային քննարկումներ և բանավեճեր,
- ✓ նյութի անհատական ներկայացումներ:

Լսարանին տրամադրվում են ուսումնական նյութը և դրա հետ կապված համապատասխան գիտական գրականությունը: Դասախոսության ընթացքում անցկացվում են նաև նյութի խմբային քննարկումներ, ինչից հետո էլ՝ անհատական աշխատանքներ:

Լսարանային ակտիվ աշխատանքի շարունակական բնույթը, համակողմանի և բազմապիսի քննարկումները նպաստում են ուսանողների գիտակազմակերպչական հմտությունների կազմավորմանը:

Աշխատանքային գործընթացը ուսանողի մոտ ձևավորում է սեփական բաղոթողումներն ու թերացումները գիտակցելու և դրանք շտկելու կարողություն, ինչն էլ ավելի է բարձրացնում աշխատանքի արդյունավետությունը և նպաստում ստուգման ընթացքին:

*Ուսումնառության մեթոդներն են՝*

- ✓ դասախոսության ունկնդրում,
- ✓ մասնագիտական գրականության ընթերցում և մշակում,
- ✓ մասնագիտական տեսանյութերի և հեռուստահաղորդումների դիտում,
- ✓ մասնակցություն քննարկումներին,
- ✓ ինքնուրույն գիտական աշխատանք (ռեֆերատներ, զեկուցումներ, կուրսային աշխատանքներ),
- ✓ խմբակային աշխատանք (դաշտային ազգագրական նյութերի գրանցում, մշակում և քննարկում):

Բանավոր քննարկումներից զատ՝ մեծ կարևորություն ունեն անհատական աշխատանքները՝ ռեֆերատների, զեկույցների, կուրսային աշխատանքների տեսքով: Վերջիններս արվում են գիտական շրջանակներում ընդունված չափանիշներին համապատասխան և արտացոլում են ոչ միայն ուսանողների գիտելիքները՝ կապված որոշակի նյութի հետ, այլև գիտական ուսումնասիրություն կատարելու նրա հմտությունները:

Աշխատանքի արդյունավետությունը բարձրացնում են նաև լսարանային ընթացիկ ստուգումները և քննարկումները: Չևավորվում է միջավայր, որտեղ յուրաքանչյուր ուսանող կարող է արտահայտվել, լսել միմյանց, շտկել սեփական բացթողումներն ու թերացումները, ինչն էլ իր հերթին բարձրացնում է աշխատանքի արդյունավետությունը:

*Դասընթացի ստուգման և գնահատման պահանջները*

Երկու միջանկյալ քննությունների արդյունքները	40 %
Ուսանողի ներկայությունը դասերին	10 %
Եզրափակիչ քննությունը	50 %
Ընդամենը	100 %

Դասընթացի արդյունքները ստուգվում և գնահատվում են ընթացիկ քննությունների և վերջնական քննության արդյունքում: Կարևորվում են նաև ուսանողի ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին, նրա կատարած անհատական աշխատանքները, զեկույցումները: Ուսանողի գիտելիքի ստուգման և գնահատման համար հաշվի են առնվում նաև ուսանողի անհատական աշխատանքները (ռեֆերատներ, զեկույցումներ, կուրսային աշխատանքներ):

Կիսամյակի ընթացքում ուսանողը հանձնում է երկու ընթացիկ քննություն: Ընթացիկ քննությունները գրավոր են: Յուրաքանչյուր ընթացիկ քննություն բաղկացած է երկու հանձնարարությունից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր (մեկ միջանկյալ քննությունը գնահատվում է 4 միավոր): Եզրափակիչ քննությունը բանավոր է: Հարցատոմսը բաղկացած 2 հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր (միասին 10 միավոր): Ուսանողի ներկայությունը գնա-

հատվում է 2 միավոր: Արդյունքում ուսանողը կարող է վաստակել առավելագույնը 20 միավոր:

*Առարկայի թեմատիկ պլանը*

N	Թեմա	Ժամանակ
1	Եզրիականությունը և դրա ուսումնասիրման պատմությունը:	2
2	Եզրիական համայնքը և դրա կառուցվածքային առանձնահատկությունները:	2
3	Եզրիական սուրբ գրքերն ու կրոնական հիմները:	2
4	Եզրիական սրբավայրերը:	2
5	Եզրիների բնակության արեայր:	2
6	Եզրիական կրոնի հիմնասյուները:	2
7	Աստծո, սրբերի և գերբնական ուժերի մասին պատկերացումները եզրիականության մեջ:	2
8	Եզրիական տոները:	2
9	Սկրտության և նվիրագործման ծեսերը եզրիականության մեջ:	2
10	Զոհաբերություններ և նվիրատվություններ կատարելու կարգը եզրիականության մեջ:	2
11	Պահքի և ծոմապահության գաղափարը եզրիականության մեջ:	2
12	Ճգնակեցության գաղափարը եզրիականության մեջ:	2
13	Եզրիականության վերափոխման հակումները ժամանակակից աշխարհում:	2
14	Եզրիական ինքնությունը:	2
15	Հայաստանի եզրիական համայնքը:	2
16	Եզրիական համայնքները Վրաստանում, Ռուսաստանի Դաշնությունում, Եվրոպայում, ԱՄՆ-ում, Ավստրալիայում:	2

## **Գաղընթացի բովանդակությունը՝ ըստ թեմաների**

«Եզդիագիտություն» դասընթացը կրում է տեսական բնույթ: Այն հիմնված է դասախոսի կողմից ներկայացվող դասախոսությունների, թեմային առնչվող գիտական գրականության ուսումնասիրման և քննարկման, ուսանողների ինքնուրույն անհատական և խմբային աշխատանքի վրա:

### ***Թեմա 1***

- Եզդիականությունը և դրա ուսումնասիրման պատմությունը:
  - ✓ Եզդիների կրոնի առաջացման մասին տեսակետները:
  - ✓ Եզդիականության ուսումնասիրման պատմությունը:

### **Առաջարկվող գրականություն**

1. Ամրյան Թ., *Եզդիների կրոնական աշխարհայացքը*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 312 էջ:
2. Ասատրյան Գ., *Քրդագիտության հիմնատարներ*, Իրան-Նամե, 1996, № (2-3) 18-19, էջ 3-6:
3. Աբովյան Խ., *Եզդիներ*, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 8, Երևան, 1958, էջ 405-412:
4. Richard Foltz, *The “Original” Kurdish Religion? Kurdish Nationalism and the False Conflation of the Yezidi and Zoroastrian Traditions*, Journal of Persianate Studies, Volume 10, Issue 1, pp. 87-106.
5. Neander A., *Über die Elemente, aus denen die Lehren der Yezidis hervorgegangen zu sein scheinen*, In Wissenschaftliche Abhandlungen, Ed. J. L. Jacobi, Berlin, 1851, pp. 112-139.

### ***Թեմա 2***

- Եզդիական համայնքը և դրա կառուցվածքային առանձնահատկությունները:
  - ✓ Եզդիական հասարակության կառուցվածքը:
  - ✓ Հոգևորական և աշխարհիկ կաստաները:

### **Առաջարկվող գրականություն**

1. Ամրյան Թ., *Եզդիների կրոնական աշխարհայացքը*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 312 էջ:
2. Kreyenbroek Ph., *Yezidism: Its Background, Observances and Textual Tradition*, New York, 1995, 352 pp.
3. Açıkyıldız B., *The Yezidis. The History of a Community, Culture and Religion*, London, 2010, 283 pp.

### **Թեմա 3**

- Եզդիական սուրբ գրքերն ու կրոնական հիմները:
  - ✓ Եզդիական կրոնի սուրբ գրվածքների բնագրերը:
  - ✓ Եզդիական կրոնական հիմները:
  - ✓ Եզդիական սուրբ գրքերի և կրոնական հիմների ուսումնասիրման պատմությունը:

### **Առաջարկվող գրականությունը**

1. Ասատրյան Գ., Փոլադյան Ա., *Եզդիների դավանանքը*, Պատմաբանասիրական հանդես, № 4, Երևան, 1989, էջ 131-150:
2. Allison Ch., *The Yezidi Oral Tradition in Iraqi Kurdistan*, London, 2001, 313 pp.
3. Anastase M., *La découverte récente des deux livres sacrés des Yézidis*, Antropos, Vol. 6, 1911, pp. 1-39.
4. Joseph I., *Devil Worship: The Sacred Books and Traditions of the Yezidiz*, Boston, 1919, pp. 222.
5. Joseph I., *Yezidi texts*, The American Journal of Semitic Languages and Literatures, Vol. 25, 1909, pp. 111-156, 218-254.

### **Թեմա 4**

- Եզդիական սրբավայրերը:
  - ✓ Մերձավոր Արևելքի տարածքում գտնվող եզդիական սրբավայրերը:
  - ✓ Հայաստանի տարածքում առկա եզդիական տաճարները և ուխտատեղիները:

### **Առաջարկվող գրականություն**

1. Ամրյան Թ., *Եզդիների կրոնական աշխարհայացքը*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 312 էջ:
2. Առաքելովա Վ., Ամրյան Թ., *Սուրբ համարվող աղբյուրների պաշտամունքը եզդիական հավատալիքներում*, Իրան-Նամե, № 42-43, Երևան, 2010-2011, էջ 18-23:
3. Սլոյան Մ., *Տաճար րասնոյ ճանապարհը*, Երևան, 2013, 100 էջ:
4. Allison Ch., *Addressivity and the Monument: Memorials, Publics and the Yezidis of Armenia*, History and Memory, Vol. 25, No. 1 (Spring/Summer 2013), pp. 145-181.
5. Edmonds C., *A pilgrimage to Lalish*, Vol. XXI, London, 1967, 88 pp.

### **Թեմա 5**

- Եզդիների բնակության արեալը:
  - ✓ Եզդիները Սերձավոր Արևելքում:
  - ✓ Եզդիները Հայաստանի Հանրապետության տարածքում:

### **Առաջարկվող գրականություն**

1. Աբովյան Խ., *Եզդիներ*, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 8, Երևան, 1958, էջ 405-412:
2. Аракелова В., *К истории формирования езидской общины*, Иран-намэ № 4, Ереван, 2006, сс. 63-66.
3. Guest J., *The Yezidis: A Study in Survival*, New York, 1987, 300 pp.

### **Թեմա 6**

- Եզդիական կրոնի հիմնասյուները:
  - ✓ Եզդիական կրոնի պատվիրանները:
  - ✓ Հոգևոր ուսուցիչների և հանդերձյալ կյանքի եղբոր ինստիտուտը եզդիականության մեջ:
  - ✓ Եզդիական աղոթքներն ու կրոնական հիմները:

### **Առաջարկվող գրականություն**

1. Ոսկանյան Վ., *Կասպույրի արգելքը եզդիականության մեջ*, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր 18, Երևան, 1999, էջ 236-241:
2. Ամրյան Թ., Կնքելու և ձեռնադրելու ծեսերը եզդիականության մեջ, ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները (Գիտական հոդվածների ժողովածու), № 3 (19), Երևան, 2013, էջ 213-220:
3. Асатрян Г., *О «брате и сестре загробной жизни» в религиозных верованиях езидов*, Страны и народы Ближнего и Среднего Востока, № 13, Курдоведение, Ереван, 1985, сс. 262-272.
4. Анкоси К., *“Фарзе братіе” у Езидов*, Тбилиси, 1996, 31 сс.
5. De la Bretèque Estelle Amy, *Chants pour la maisonnée au chevet du défunt La communauté et l'exil dans les funérailles des Yézidis d'Arménie*, Frontières, Vol. 20, N 2, 2008, pp. 60-66.

### **Թեմա 7**

- Աստծո, սրբերի և գերբնական ուժերի մասին պատկերացումները եզդիականության մեջ:
  - ✓ Աստծո կերպարը եզդիական հավատալիքներում: Աստծո անունները:
  - ✓ Սրբերը եզդիականության մեջ:
  - ✓ Հրեշտակներն ու գերբնական ուժերը եզդիական հավատալիքներում:

### **Առաջարկվող գրականություն**

1. Ամրյան Թ., Աստծո անունները եզդիական բանասիրության մեջ, Օրիենտալիս, պրակ 11, Երևան, 2010, էջ 3-15:
2. Ավդալ Ա., *Եզդի քրդերի հավատալիքները*, Երևան, 2006, 192 էջ:
3. Ամրյան Թ., *Եզդիների կրոնական աշխարհայացքը*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 312 էջ:
4. Asatrian G., Arakelova V., *The Religion of the Peacock Angel: The Yezidis and their Spirit World*, London, 2014, 142 pp.



## **Թեմա 8**

- Եզդիական տոները:
  - ✓ Եզդիականության բնօրրանում նշվող եզդիական տոները:
  - ✓ Եզդիականության բնօրրանից դուրս նշվող եզդիական տոները:

### **Առաջարկվող գրականություն**

1. Ավդալ Ա., *Եզդի քրդերի հավատալիքները*, Երևան, 2006, 192 էջ:
2. Ամրյան Թ., *Եզդիների կրոնական աշխարհայացքը*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 312 էջ:
3. Açıkyıldız B., *The Yezidis. The History of a Community, Culture and Religion*, London, 2010, 283 pp.
4. Kreyenbroek Ph., *Yezidism: Its Background, Observances and Textual Tradition*, New York, 1995, 352 pp.

## **Թեմա 9**

- Սկրտության և նվիրագործման ծեսերը եզդիականության մեջ:
  - ✓ *Մոր կրրըն* ծեսը և դրա խորհուրդը:
  - ✓ *Բրակ բրռին*, *սունաթ կրրըն* ծեսերն ու դրանց մեկնաբանությունը:

### **Առաջարկվող գրականություն**

1. Ամրյան Թ., *Կնքելու և շեռնադրելու ծեսերը եզդիականության մեջ*, ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները (Գիտական հոդվածների ժողովածու/, № 3 (19), Երևան, 2013, էջ 213-220:
2. Տէր-Մանուելյան Ս., *Եզդիի-կուրմանժ*, Ախալցխա, 1910, 44 էջ:
3. Ամրյան Թ., *Եզդիների կրոնական աշխարհայացքը*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 312 էջ:

## **Թեմա 10**

- Չոհաբերություններ և նվիրատվություններ կատարելու կարգը եզրիականության մեջ:
  - ✓ Եզրիական միջավայրում զոհաբերություն կատարելու կարգը:
  - ✓ Կրոնական նվիրատվություններն ու դրանց առանձնահատկությունները:

### **Առաջարկվող գրականություն**

1. Ավդալ Ա., *Եզրի քրդերի հավատալիքները*, Երևան, 2006, 192 էջ:
2. Տէր-Մանուելյան Ս., *Եզրի-կուրմանժ*, Ախալցխա, 1910, 44 էջ:
3. Ամրյան Թ., *Եզրիների կրոնական աշխարհայացքը*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 312 էջ:
4. Kreyenbroek Ph., *Yezidism: Its Background, Observances and Textual Tradition*, New York, 1995, 352 pp.

## **Թեմա 11**

- Պահքի և ծոմապահության գաղափարը եզրիականության մեջ:
  - ✓ Եզրիական ծոմի առանձնահատկությունները:
  - ✓ Ծոմի խորհուրդը և դրա գործառույթը կրոնական ավանդույթում:

### **Առաջարկվող գրականություն**

1. Ավդալ Ա., *Եզրի քրդերի հավատալիքները*, Երևան, 2006, 192 էջ:
2. Տէր-Մանուելյան Ս., *Եզրի-կուրմանժ*, Ախալցխա, 1910, 44 էջ:
3. Ամրյան Թ., *Եզրիների կրոնական աշխարհայացքը*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 312 էջ:

## **Թեմա 12**

- Դգնակեցության գաղափարը եզրիականության մեջ:
  - ✓ Ֆակիրների ճանապարհը:
  - ✓ Ֆակիրի ձեռնադրման արարողություն:

### **Առաջարկվող գրականություն**

1. Ամրյան Թ., *Սուֆիական ինքնակատարելագործման ճանապարհի գաղափարն արյուսահայրող որոշ եզրեր եզրիական կրոնական հիմներում*, Բանբեր Մատենադարանի, № 24, Երևան, 2017, էջ 35-46:
2. Ամրյան Թ., *Սուֆիական սիրո և արքեցունի գաղափարը եզրիական կրոնական հիմներում*, Արևելագիտության հարցեր, № 12, Երևան, 2016, էջ 281-294:
3. Ամրյան Թ., *Դգնածեսը եզրիականության մեջ*, Արևելագիտության հարցեր, N 8, Երևան, 2013, էջ 323-332:
4. Ամրյան Թ., *Կավալների երաժշտական գործիքները որպես պաշտամունքի առարկա եզրիական հավատարմիքներում*, Օրինետալիա, պրակ 15, Երևան, 2013, էջ 36-39:
5. Açıkyıldız B., *The Yezidis. The History of a Community, Culture and Religion*, London, 2010, 283 pp.

## **Թեմա 13**

- Եզրիականության վերափոխման հակումները ժամանակակից աշխարհում:
  - ✓ Եզրիական կրոնի և ծեսերի հարմարեցումը նոր միջավայրին:
  - ✓ Նոր շրջանի եզրիական սրբավայրերն ու կրոնական արարողությունների վերափոխումը:

### **Առաջարկվող գրականություն**

1. Ամրյան Թ., *Եզրիների կրոնական աշխարհայացքը*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 312 էջ:

2. Sebastian Maisel, Syria's Yezidis in the Kūrd Dāgh and the Jazīra: Building Identities in a Heterodox Community, *The Muslim World*, Volume 103, Issue 1, January 2013, pp. 24-40.
3. Kreyenbroek Ph., *Yezidism in Europe, Different Generations Speak about their Religion*, Wiesbaden, 2009, 246 pp.

#### **Թեմա 14**

- Եզդիական ինքնությունը:
  - ✓ Եզդիական ինքնության առանձնահատկությունները:
  - ✓ Եզդիական շարժումը:

#### **Առաջարկվող գրականություն**

1. Ամրյան Թ., *Այլադավաններին և այլազգիներին բնորոշելու համար կիրառվող եզրույթները եզդիական կրոնական հիմնե-րում*, Իրան-Նամե, № 44-45, Երևան, 2012-2013, էջ 108-112:
2. Dalalyan T., Construction of Kurdish and Yezidi Identities among the Kurmanji-speaking Population of the Republic of Armenia, in: *Changing Identities: Armenia, Azerbaijan, Georgia (Collection of Selected Works)*, Heinrich Böll Stiftung South Caucasus, 2011, pp. 178-201.
3. Sebastian Maisel, Syria's Yezidis in the Kūrd Dāgh and the Jazīra: Building Identities in a Heterodox Community, *The Muslim World*, Volume 103, Issue 1, January 2013, pp. 24-40.
4. Sebastian Maisel, *Yezidis in Syria: Identity Building among a Double Minority*, Lexington Books, 2016, 204 pp.
5. Давтян С. , Аракелова В., Езиды. Вектор этничности, Иран-наме, Ереван, т. 40, с. 75-84.

#### **Թեմա 15**

- Հայաստանի եզդիական համայնքը:
  - ✓ Հայաստանի եզդիական համայնքի ձևավորման պատմու-թյունը:
  - ✓ Եզդիներով բնակեցված տարածքները Հայաստանում:

- ✓ Հայաստանի եզդիական համայնքն արդի ժամանակաշրջանում:

### **Առաջարկվող գրականություն**

1. Ավդալ Ա., *Անդրկովկասյան քրդերի կենցաղը*, Երևան, 1957, 303 էջ:
2. Laurence Broers, *The Human Rights Situation of the Yezidi Minority in the Transcaucasus (Armenia, Georgia, Azerbaijan)*, A Writenet Report commissioned by United Nations High Commissioner for Refugees, Status Determination and Protection Information Section (DIPS), May, 2008.
3. Khanna Omarkhali, *The Kurds in the Former Soviet States from the Historical and Cultural Perspectives*, The Copernicus Journal of Political Studies, Torun, 2013 pp. 128-142.

### **Թեմա 16**

- Եզդիական համայնքները Վրաստանում, Ռուսաստանի Դաշնությունում, Եվրոպայում, ԱՄՆ-ում և Ավստրալիայում:
  - ✓ Վրաստանի եզդիական համայնքը:
  - ✓ Եզդիական համայնքները Ռուսաստանի և Եվրոպայի տարածքում:

### **Առաջարկվող գրականություն**

1. Melkumyan H., *“Elites” Between Nationalism and Tradition: The Modernization Processes in the Yezidi Community of Armenia*, Elites and “Elites”: Transformations of Social Structures in, Post-Soviet Armenia and Georgia, pp. 175-195.
2. Guardiola A., *Yezidis in diaspora: multi-sited ethnography of a transnational socio-religious network (in French)* (Master's Thesis - without appendix), 2016/2017 academic year.
3. Laurence Broers, *The Human Rights Situation of the Yezidi Minority in the Transcaucasus (Armenia, Georgia, Azerbaijan)*, A Writenet Report commissioned by United Nations High

Commissioner for Refugees, Status Determination and Protection Information Section (DIPS), May, 2008.

4. Khanna Omarkhali, *The Kurds in the Former Soviet States from the Historical and Cultural Perspectives*, The Copernicus Journal of Political Studies, Torun, 2013 pp. 128-142.

## **Դասընթացի համառոտ բովանդակությունը՝ ըստ ուսումնառության շաբաթների**

### ***1-ին շաբաթ***

Թեմատիկ բովանդակություն

Եզդիականությունը և դրա ուսումնասիրման պատմությունը: Վաղ շրջանի ճանապարհորդները, գիտնականներն ու հետազոտողները (գրականության տեսություն): Եզդիների կրոնի առաջացման մասին վարկածներն ու թեզերը:

*Դասավանդման ձևը*

Դասախոսություն:

*Ուսումնառության ձևը*

Դասախոսության ունկնդրում, նյութն ուսումնասիրելու համար անհրաժեշտ գրականության ցանկի ներկայացում:

*Գնահատման ձևը՝ ընթացիկ գնահատում*

Բանավոր հարցումներ, հարցադրումներ և քննարկումներ:

### ***2-րդ շաբաթ***

Թեմատիկ բովանդակություն

Եզդիական համայնքը և դրա կառուցվածքային առանձնահատկությունները: Համայնքի կաստայական բաժանումը, հոգևորական և աշխարհիկ կաստաների ներկայացուցիչների կապերի ու հարաբերությունների վրա ձևավորված համակարգը

*Դասավանդման ձևը*

Դասախոսություն, քննարկում:

*Ուսումնառության եղանակը*

Նյութն ուսումնասիրելու համար անհրաժեշտ համապատասխան գրականության ուսումնասիրում, քննարկում:

*Գնահատման ձևը՝ ընթացիկ*

Հարցուպատասխան, ընդհանուր քննարկումներ:

### **3-րդ շաբաթ**

Թեմատիկ բովանդակություն

Եզդիական սուրբ գրքերն ու կրոնական հիմները: Դրանց դերը եզդիական կրոնական ավանդույթում: Եզդիական կրոնական գրվածքների հայտնաբերման և ուսումնասիրման պատմությունը: Եզդիական սուրբ գրքերի և հիմների թարգմանությունները տարբեր լեզուներով:

*Դասավանդման ձևը*

Դասախոսություն:

*Ուսումնառության ձևը*

Նյութի հետ կապված գրականության ընթերցում և քննարկում:

*Գնահատման ձևը՝ ընթացիկ*

Անհատական ներկայացումներ:

### **4-րդ շաբաթ**

Թեմատիկ բովանդակություն

Եզդիականության բնօրրանում գտնվող եզդիական տաճարները, սրբերի մատուցներն ու այլ սրբավայրեր: Պատմության ընթացքում եզդիականության բնօրրանից դուրս գտնվող սրբավայրերի առաջացման պատմությունը: Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող եզդիական տաճարներն ու սրբավայրերը:

*Դասավանդման ձևը*

Դասախոսություն, ֆիլմերի ու տեսանյութերի դիտում:

*Ուսումնառության ձևը*

Նյութի հետ կապված գրականության ընթերցում, այցելություն Հայաստանում գտնվող եզդիական տաճար:

*Գնահատման ձևը՝ ընթացիկ*

Կուրսային աշխատանքի ներկայացում, քննարկում:

### **5-րդ շաբաթ**

Թեմատիկ բովանդակություն

Եզդիականության ձևավորման տարածքը՝ ժամանակակից Հյուսիսային Իրաքի Լալիշի կիրճում: Եզդիական համայնքի տարբեր



հատվածների տարածումը Մերձավոր և Միջին Արևելքի տարբեր վայրերում: Պատմական դեպքերի բերումով եզդիների հայտնվելը ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում:

*Դասավանդման ձևը*

Դասախոսություն:

*Ուսումնառության եղանակը*

Նյութի քննարկում և վերլուծություն:

*Գնահատման ձևը՝ ընթացիկ*

Հարցադրումներ, հարցուպատասխան:

### **6-րդ շաբաթ**

Թեմատիկ բովանդակություն

Եզդիական կրոնի հիմնասյուները: Հավատացյալ եզդիների համար պարտադիր համարվող կրոնական պարտականությունները, մասնավորապես, հոգևոր ուսուցիչներ և հանդերձյալ կյանքի եղբայր «ընտրելու» կանոնները: Եզդիական աղոթքներ և կրոնական հիմներ ընթերցելու կարգը:

*Դասավանդման ձևը*

Դասախոսություն:

*Ուսումնառության եղանակը*

Նյութի քննարկում և վերլուծություն:

*Գնահատման ձևը՝ ընթացիկ*

Հարցադրումներ, հարցուպատասխան, ճեպագրույց:

### **7-րդ շաբաթ**

Թեմատիկ բովանդակություն

Աստծո, սրբերի և գերբնական ուժերի մասին պատկերացումները եզդիականության մեջ: Կրոնական տեքստերում և ժողովրդական բանահյուսության մեջ կիրառվող Աստծո անուններն ու պատվանունները: Սրբերի, հրեշտակների հետ կապված հավատալիքներն ու ավանդագրույցները:

*Դասավանդման ձևը*

Դասախոսություն, քննարկում:

*Ուսումնառության ձևը*

Համապատասխան գրականության ընթերցում, անհատական ներկայացումներ,

*Գնահատման ձևը՝ ընթացիկ*

Հարցադրումներ, հարցուպատասխան:

### **8-րդ շաբաթ**

Թեմատիկ բովանդակություն

Եզդիական կրոնական տոների քննարկումն ու վերլուծությունը: Եզդիականության բնօրրանում նշվող տոների առանձնահատկությունները: Եզդիական սկյուռքում կրոնական տոներ նշելու առանձնահատկությունները: Հայաստանի եզդիների շրջանում նշվող կրոնական տոները, դրանց վրա հայկական տոների ու հավատալիքային տարրերի ազդեցությունը:

*Դասավանդման ձևը*

Դասախոսություն, տեսաֆիլմի դիտում:

*Ուսումնառության ձևը*

Նյութի քննարկում, համապատասխան գիտական աշխատանքների, ինչպես նաև տեսանյութերի դիտում:

*Գնահատման ձևը՝ ընթացիկ*

Անհատական ներկայացումներ, հարցուպատասխան:

### **9-րդ շաբաթ**

Թեմատիկ բովանդակություն

Եզդիական մկրտության և նվիրագործման ծեսեր կատարելու կարգը, դրանց խորհուրդն ու մեկնաբանությունը: Տարբեր սեռերի ներկայացուցիչների համար կատարվող ծեսերի ընդհանրություններն ու տարբերությունները:

*Դասավանդման ձևը*

Դասախոսություն, տեսանյութի դիտում:

*Ուսումնառության շեր*

Նյութի առնչվող գրականության ընթերցում, դաշտային ազգագրական նյութի ներկայացում և քննարկում:

*Գնահատման շեր` վերջնադրյունքի գնահատում*

Ձեկույցների և ռեֆերատների ներկայացում, քննարկում:

**10-րդ շաբաթ**

Թեմատիկ բովանդակություն

Եզդիական կրոնական ավանդություն գոհաբերություններ կատարելու պարտականությունը և դրա հետ կապված կանոնները: Որոշակի արարողությունների հետ կապված նվիրատվություններ կատարելու կարգը:

*Դասավանդման շեր*

Դասախոսություն, քննարկում:

*Ուսումնառության շեր*

Նյութի ընթերցում, մշակում և համեմատական քննություն:

*Գնահատման շեր` ընթացիկ*

Հարցուպատասխան, ճեպագրույց:

**11-րդ շաբաթ**

Թեմատիկ բովանդակություն

Եզդիական կրոնական ավանդություն առկա պահքի և ծոմապահության ձևերը. կրոնական տոներից առաջ պահվող եռօրյա ծոմը և դրա խորհուրդը: Եզդիական ծոմի համեմատումը իսլամական և մի շարք այլ կրոնական հանրությունների կրոնական ավանդություն առկա ծոմապահության հետ:

*Դասավանդման շեր*

Դասախոսություն:

*Ուսումնառության շեր*

Համապատասխան գրականության ընթերցում, քննարկումների կազմակերպում:

*Գնահատման շեր՝ ընթացիկ*

Նյութի քննարկում հարցուպատասխան:

### **12-րդ շաբաթ**

Թեմատիկ բովանդակություն

Ճգնակեցության գաղափարը եզրիականության մեջ: Ճգնակեցության ճանապարհին ընտրելու հետ առնչվող մոտիվներն ու արգելքները: Եզրի ճգնակյացի ճանապարհին ու դրա յուրահատկությունները: Սուֆիական ճգնակեցության գաղափարի վերափոխումը եզրիականության մեջ:

*Դասավանդման շեր*

Դասախոսություն, քննարկում:

*Ուսումնառության շեր*

Նյութի առնչվող գրականության ընթերցում և վերլուծություն:

*Գնահատման շեր՝ ընթացիկ*

Անհատական ներկայացումներ, հարցուպատասխան:

### **13-րդ շաբաթ**

Թեմատիկ բովանդակություն

Եզրիականության վերափոխման հակումները ժամանակակից աշխարհում: Միգրացիայի արդյունքում եզրիական կրոնի և որոշ ծիսական արարողությունների տարրերի փոփոխությունը, դրանց հարմարեցումը նոր միջավայրին: Նոր կառուցված և կառուցվող եզրիական տաճարներն ու սրբավայրերը:

*Դասավանդման շեր*

Դասախոսություն, ֆիլմի դիտում:

*Ուսումնառության շեր*

Համապատասխան գրականության ընթերցում, տեսանյութերի դիտում.

*Գնահատման շեր՝ ընթացիկ*

Հարցուպատասխան, քննարկում:

#### **14-րդ շարք**

Թեմատիկ բովանդակություն

Եզդիների ինքնության ձևավորումը, դրա առանձնահատկությունները: Եզդիական ինքնագիտակցության բարձրացումն ու եզդիական շարժումը: Եզդիական ինքնության վերափոխումն ու բյուրեղացումն արդի ժամանակաշրջանում:

*Դասավանդման ձևը*

Դասախոսություն, քննարկում:

*Ուսումնառության ձևը*

Համապատասխան գրականության ուսումնասիրում:

*Գնահատման ձևը՝ ընթացիկ*

Հարցուպատասխան, քննարկում, ճեպագրույց:

#### **15-րդ շարք**

Թեմատիկ բովանդակություն

Հայաստանի եզդիական համայնքի ձևավորման և զարգացման պատմությունը: Հայաստանի Հանրապետության տարածքում եզդիներով բնակեցված շրջանները, եզդիների կենսակերպն ու կենցաղը: Հայաստանի եզդիական համայնքի դերը երկրի հասարակական-քաղաքական կյանքում:

*Դասավանդման ձևը*

Դասախոսություն, քննարկում:

*Ուսումնառության ձևը*

Համապատասխան գրականության ուսումնասիրում:

*Գնահատման ձևը՝ ընթացիկ*

Հարցուպատասխան, քննարկում:

#### **16-րդ շարք**

Թեմատիկ բովանդակություն

20-րդ դարի սկզբին Հայաստանի եզդիների տեղաշարժերի հետևանքով Վրաստանի եզդիական համայնքի ձևավորման պատմու-

թյունը: 1990-ական թվականներին Հայաստանից և Վրաստանից արտագաղթող եզդիների և նրանց ժառանգների շնորհիվ Ռուսաստանի Դաշնության տարածքում ստեղծված եզդիական համայնքները: ԱՊՀ-ից և Մերձավոր Արևելքի տարածքից արտագաղթած և արտագաղթող եզդիների միջոցով ձևավորված եզդիական համայնքները Եվրոպայում, ԱՄՆ-ում, Ավստրալիայում:

*Դասավանդման ձևը*

Դասախոսություն, քննարկում:

*Ուսումնառության ձևը*

Համապատասխան գրականության ուսումնասիրում:

*Գնահատման ձևը՝ ընթացիկ*

Հարցուպատասխան, քննարկում:

### ***Քննաշրջանի ավարտ***

*Գնահատման ձևը՝ վերջնադրյունքի գնահատում*

Բանավոր եզրափակիչ քննություն:

### ***1-3 շաբաթներ***

Ուսումնառության սկզբնական շրջանը նվիրվում է եզդիականության ուսումնասիրման պատմությանը, ներկայացվում է եզդիական եզդիական համայնքի կառուցվածքը, քննության են առնվում եզդիական սուրբ գրքերն ու կրոնական հիմները:

Եզդիների կրոնը երկար ժամանակ գաղտնիք է եղել հարևան ժողովուրդների, ճանապարհորդների և ուսումնասիրողների համար: Եզդիները հիշատակվում են նաև XVII-XVIII դարերի հետազոտողների, ճանապարհորդների, միսիոներների գործերում և հուշագրություններում, սակայն այդ տեղեկությունները պատկերացում չեն տալիս եզդիների կրոնի ու հոգևոր կյանքի մասին. շատ հեղինակներ հպանցիկ կերպով են անդրադառնում եզդիներին և հիշատակում են նրանց մասին տարածաշրջանի այլ ժողովուրդների մասին խոսելիս: Ուստի դասընթացի սկզբնական շրջանում ներկայացվում են վաղ ուսումնասիրողների, հետազոտողների աշխատանքները, որոնցում անդրադարձ է կա-

տարվել եզրիականությանը կամ արծարծվել են եզրիականության տարբեր կողմերը: Հընթացս ներկայացվում ու քննարկվում են եզրիականության առաջացման մասին գիտական և ոչ գիտական տեսակետները:

Գիտական ուսումնասիրությունները փաստում ու հաստատում են, որ եզրիների կրոնը ձևավորվել է XI–XIV դարերի ընթացքում Հյուսիսային Իրաքի Լալիշի կիրճում միջնադարյան հայտնի սուֆի Շեյխ Ալի բին Մուսաֆիբի գլխավորած ադավիա սուֆիական եղբայրակցության հիմքի վրա: Եզրիական հասարակությունը կազմված է աշխարհիկ եզրիների՝ մըրիդների (արաբ. *mürīd*, «հետևորդ») և հոգևորականների՝ շեյխերի (արաբ. *šayx*, «ավագ», «առաջնորդ») ու փիլերի (արս. *pīr*, «ծերունի», «իմաստուն», «հոգևոր առաջնորդ») կաստաներից: Սուֆիական եղբայրակցություններում մուրիդ կամ մորիդ են կոչվել այն մարդիկ, որոնք գտնվում էին հոգևոր ինքնակատարելագործման ուղու առաջին աստիճանին: Ի տարբերություն սուֆիական համայնքների, որտեղ ինքնակատարելագործման ճանապարհը հաջողությամբ անցնելուց հետո մորիդը դառնում էր մուրշիդ (այսինքն՝ փիլ կամ շեյխ), եզրիական համայնքում մըրիդը ողջ կյանքում մնում է մըրիդ: Եզրիական հասարակության մեջ չեն պահպանվել սուֆիական համայնքին հատուկ մորիդի և մուրշիդի հարաբերությունները. փոխարենը շեյխերի, փիլերի ու մրիդների միջև ձևավորվել են այլ, միայն եզրիական համայնքին հատուկ կապեր ու հարաբերություններ:

Եզրիների կրոնի ուսումնասիրության կարևոր աղբյուր են համարվում եզրիականության սուրբ գրքերը՝ *Քթեբա ջալվան* (թարգմ. Հայտնության գիրք) և *Մասհաֆե ռաշը* (թարգմ. Սև մատյան), որոնք մի քանի էջանոց գրվածքներ են: Եզրիական սուրբ գրքերն ավանդված են երկու տարբերակով՝ քրդերեն և արաբերեն: Քթեբա ջալվան նվիրված է Մալաք Թավուսին. այստեղ Մալաք Թավուսը դիմում է եզրիներին՝ կոչ անելով հավատարիմ մնալ սեփական դավանանքին ու չիրապուրվել այլադավանների կրոնական գաղափարներով: Մասհաֆե ռաշը հակիրճ ներկայացնում է աշխարհի արարումը և եզրիների ստեղծումը: Եզրիների սուրբ գրքերը ուսումնասիրվել, թարգմանվել ու տպագրվել են տարբեր լեզուներով. դրանք հայերեն թարգմանել են Գառնիկ Ասատրյանն ու Արշակ Փոլադյանը (Ասատրյան Գ., Փոլադյան Ա., Եզրիների

դավանանքը, Պատմաբանասիրական հանդես, № 4, Երևան, 1989, էջ 131-150):

Եզդիների կրոնական հիմների ամբողջականությունը կոչվում է *qawlnbayt*: Տարբեր կրոնական արարողությունների ժամանակ դրանք արտասանվում են եզդի հոգևորականների կողմից: Եզդիական կրոնական հիմներից շատերը ուսումնասիրվել ու թարգմանվել են տարբեր լեզուներով:

#### **4-5 շաբաթներ**

Ուսումնառության այս ընթացքում ուսումնասիրվում են եզդիական սրբավայրերը և եզդիների բնակության արեալը, պատմության ընթացքում եզդիական սփյուռքի առաջացումն ու ձևավորումը:

Եզդիականության բնօրրանը և եզդիների պատմական հայրենիքն է համարվում Հյուսիսային Իրաքում գտնվող Լալիշի կիրճը: Այդտեղ է գտնվում եզդիական կրոնի կենտրոնական սրբատեղին և գլխավոր տաճարը, որտեղ թաղված է Շեյխ Ադին: Եզդիների կրոնական աշխարհընկալման մեջ «Լալիշի կիրճ» և «գլխավոր տաճար» հասկացություններն անբաժան են: Ըստ ավանդության՝ ի սկզբանե Լալիշը գտնվել է երկնքում, հետո Աստված այն իջեցրել է ներքև ու արարել աշխարհը: Այսպիսով՝ եզդիների կրոնական ընկալումներում Լալիշը հանդես է գալիս որպես «աշխարհի կենտրոն»:

Բացի գլխավոր տաճարից՝ եզդիների համար սրբավայր և ուխտատեղի են համարվում սրբերի շիրիմները, մատուռները և եզդիականության բնօրրանում ու դրանից դուրս գտնվող եզդի հոգևորականների տները, Հյուսիսային Իրաքում մի շարք եզդի սրբերի շիրիմների վրա կառուցած մատուռները, որոնց վերագրում են տարբեր հիվանդություններ բուժելու գորություն:

Եզդիների կրոնում ընդունված չի եղել Լալիշից դուրս սրբավայրեր ու տաճարներ կառուցելը. երկար ժամանակ եզդիականության բնօրրանից դուրս սրբատեղիներ չեն ստեղծվել: Վերջին տասնամյակների ընթացքում, սակայն, այդ սովորույթը վերափոխվում է: Օրինակ՝ ոչ վաղ անցյալում Հայաստանում՝ Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղում, կառուցվեց եզդիական տաճար: Դրա բացմանը 2012 թվականին սեպտեմբերի 29-ին ներկա էր նաև եզդիների հոգևոր առաջնորդ Սիր Թահսին



Բեզբ: Եզդիների համար սրբավայրի դեր են կատարում նաև եզդիականության բնօրրանում և դրանից դուրս գտնվող եզդի հոգևորականների տները, որտեղ պահվում են սրբություններ և պաշտամունքի առարկաներ:

Մուսուլմանների կողմից բռնությունների և կոտորածների ենթարկվելու պատճառով XVI-XVII դարերում եզդիների մի մասը Լալիշից տեղափոխվել էր Սինջար: Հետագայում եզդիները նորից դաժան հալածանքների ենթարկվեցին Օսմանյան կայսրությունում, ինչի հետևանքով նրանց մի մասը դուրս եկավ Լալիշից ու Սինջարից և բնակություն հաստատեց այլ վայրերում ևս: 1923 թվականին Լոզանի պայմանագրի կնքումից և Մերձավոր Արևելքում մի շարք նոր պետությունների և նոր պետական սահմանների ի հայտ գալուց հետո տարբեր եզդիական համայնքներ հայտնվեցին տարբեր պետությունների՝ Իրաքի, Թուրքիայի, Սիրիայի, Խորհրդային Հայաստանի տարածքում: Թուրքիայի տարածքում սպրող եզդիների մեծ մասը XIX-XX դարերում գաղթեց և բնակություն հաստատեց ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում ու Վրաստանում: Եզդիների մի սովոր գանգված ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում էր բնակվում դեռևս XIX դարից: Ներկայումս բազմաթիվ եզդիներ են բնակվում նաև Հայաստանում, Վրաստանում, Թուրքիայում, Սիրիայում, Ռուսաստանում, Եվրոպական երկրներում, ԱՄՆ-ի տարածքում և Ավստրալիայում:

### **6-8 շաբաթներ**

Ուսումնառության այս ընթացքում ուսումնասիրվում են եզդիական կրոնի հիմնասյուները, եզդիական կրոնական աշխարհընկալման մեջ Աստծո և սրբերի մասին պատկերացումները, ինչպես նաև եզդիականության բնօրրանում և սփյուռքում նշվող եզդիական տոները:

Ինչպես բոլոր կրոններում, այնպես էլ եզդիականության մեջ գոյություն ունեն պատվիրաններ դեր կատարող մի շարք պարտականություններ, ծեսեր ու արարողություններ: Դրանք եզդիական կրոնական հիմներում անվանվում են ark'ān (բռց. «սյուն», «հիմնասյուն»): Ըստ ավանդության՝ Աստված եզդիական համայնքին տվել է իննսունհինը «սյուն», և եզդիները պարտավոր են սրբորեն պահել դրանք: Ի տարբերություն դոգմատիկ համակարգ մշակած կրոնների՝ եզդիականության մեջ հստակորեն ամրագրված չեն պարտադիր համարվող պատվիրանները և կրոնական ծեսեր կատարելու կարգը: Եզդիների կրոնական աշ-

խարհընկալման մեջ, սակայն, գոյություն ունի որոշակիորեն ձևավորված, բոլոր եզրիների համար պարտադիր համարվող և ավանդույթի ուժով պահպանվող կրոնական արարողությունների ամբողջականություն:

Եզդիներն Աստծուն անվանում են Xwadē, Xudē, Xudāvand (իրան. \*xwa-tāwan- ձևից): Աստծո ընկալումը նրանց կրոնում բավական յուրահատուկ է և նման չէ մուսուլմանների կամ քրիստոնյաների ընկալումներին: Ըստ եզդիական հավատալիքների՝ արարիչ Աստված ունի «հազար ու մի անուն»: Աստված տարբեր պատվանուններով է մեծարվում եզդիական կրոնական հիմներում և ժողովրդական բանահյուսության մեջ:

Եզդիական սրբերից շատերը համարվում են բնության երևույթների, կյանքի տարբեր բնագավառների պահապան ու հովանավոր: Համաձայն եզդիական որոշ հավատալիքների՝ սրբերը հրեշտակներ են եղել և վերափոխվել ու աշխարհ են եկել որպես մարդ: Ըստ էության՝ եզդիական սրբերից շատերը պատմական անձինք են, այդ թվում՝ սրբացված սուֆի ճգնակյացներ: Եզդիական կրոնական հիմներում նրանք մեծարվում են տարբեր պատվանուններով, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս պատկերացում կազմել, թե ինչ տեղ են նրանք զբաղեցնում եզդիների կրոնական աշխարհընկալման մեջ: Կրոնական հիմներում և ժողովրդական բանահյուսության մեջ եզդիական սրբերի նվիրապետությունն անվանվում է dīwān (թարգմ. «խորհուրդ»): Եզդիների կրոնական պատկերացումներում դիվանը հանդես է գալիս որպես քառասուն սրբերի (čil mēre dīwānā Šixādī, թարգմ. «Շեյխ Ադիի դիվանի քառասուն սուրբ») ամբողջականություն:

Բոլոր մշակույթների կարևորագույն բաղադրիչ են համարվում կրոնական տոները: Եզդիական տոների մի մասը ընդհանուր իսլամական ավանդույթի շարունակությունն են, մյուսները տարածաշրջանային հավատալիքների հետ կապված տոներ են: Վերջիններս խորհրդանշում են անցում մի շրջանից մեկ այլ շրջանի, մի վիճակից՝ մեկ այլ վիճակի, ինչպես նաև նորի կառուցում, նորի սկիզբ. դա կարող է լինել ցուրտ եղանակից՝ ձմռանից անցում դեպի գարուն, հին տարուց անցում դեպի նոր տարի: Կան մի շարք եզդիական տոներ, որոնք նշվում են իրաբարձակ եզդիների շրջանում, բայց մոռացության են մատնվել այլ երկրների եզդիական համայնքներում կամ նշվում են՝ ստանալով վերափոխված մեկնաբանություն:

### **9-11 շաբաթներ**

Ուսումնառության այս հատվածում ուսանողին ներկայացվում են եզդիական մկրտության, նվիրագործման ծեսերը, գոհաբերություններ, նվիրատվություններ կատարելու կարգն ու ծոմապահությունը:

Եզդիականության մեջ գոյություն է ունեցել նվիրագործելու երեք ծես՝ bisk biřin (բոց. «մազը կտրել»), mōr kirin (բոց. «օծել», «կնքել»), sunat kirin (բոց. «թլպատել»): Եզդիականության մեջ նվիրագործման և մկրտության մի քանի տեսակ ծեսերի առկայությունը կարելի է բացատրել ոչ միայն գրային ավանդույթի և կրոնական դոգմատիկայի բացակայությամբ, այլև կրոնի սինկրետիկ բնույթով: Ժամանակի ընթացքում որոշ երկրներում բնակվող եզդիների շրջանում այդ արարողությունները մասամբ մոռացության են մատնվել: Պատճառը մի կողմից իսլամի հետ կապի ժխտումն ու եզդիական ինքնության ամրապնդումն է, մյուս կողմից՝ աշխարհագրական առումով եզդիականության բնօրրան Լալիշից հեռու գտնվելու հանգամանքը: Ամեն դեպքում նվիրագործման և մկրտության ծեսերը, անկախ իրենց ծագումից, եզդիական միջավայրում յուրօրինակ մշակման են ենթարկվել և ներկայումս եզդիների կրոնական աշխարհընկալման շրջանակներում յուրովի են մեկնաբանվում:

Եզդիները գոհաբերություն կատարում են, գոհ մատուցում են՝ բուժվելու կամ սուրբ մասունքները տեսնելու նպատակով շեյխի կամ փիրի տուն այցելելիս, սրբավայրեր ուխտագնացություն կատարելիս, կրոնական տոների ժամանակ և այլ առիթներով: Եզդիական գոհաբերության ծեսը ներառում է և՛ իսլամական, և՛ տարածաշրջանի ժողովրդական հավատալիքների արարողակարգային տարրեր, որոնք վերափոխվել են եզդիների կրոնական ավանդույթի մեջ:

Եզդիների կրոնական կյանքում մեծ կարևորություն ունի պարտադիր կամ կամավոր սկզբունքով նվիրատվություն կատարելու սովորույթը: Աշխարհիկ կաստայի եզդիները պարտավոր են ժամանակ առ ժամանակ ընծաներ և գումար տալ հոգևորականներին:

Եզդիական կրոնական ավանդություն ընդունված է եռօրյա ծոմը, որը հիմնականում նախորդում է կրոնական տոներին: Հարկ է նշել, որ եզդիների կրոնական ծիսակարգում, բացի համընդհանուր տարածում ունեցող և տոներին նախորդող ծոմերից, կարևորվում է նաև անհատա-

կան կամ ազատ ծոմը: Նման դեպքերում կարող են ցանկացած օր ծոմ պահել ու աղոթել, որպեսզի իրենց երազանքն իրականանա, նպատակը կատարվի:

### *12-16 շաբաթներ*

Ուսումնառության այս ընթացքում ներկայացվում է եզրիականության մեջ ճգնակեցության գաղափարը, քննարկվում են ժամանակակից աշխարհում եզրիականության վերափոխման հակումները, եզրիական ինքնության առանձնահատկությունները, ինչպես նաև տարբեր երկրների եզրիական համայնքները:

Եզրիական հասարակության մեջ գոյություն ունի եղբայրակցական մի խավ, որ կոչվում է ֆակիրների (արաբ. faqr, «չբավորություն») խավ: Ֆակիրներն առաքիճության ու բարեպաշտության օրինակ են ծառայում համայնքում: Սուֆի ձեռնադրվողների պես եզրի ֆակիրներն իրենց կոչմանն արժանանում են ճգնակեցությամբ ու աղոթքներով: Ձեռնադրմանը նախորդում է կրոնական երկարատև ու խիստ ուսուցումը, հոգևոր դաստիարակությունը, ծոմապահությունը: Դրանից հետո քեկնածուին ֆակիր է ձեռնադրում այն հոգևորականը, ով ուսուցչի դեր է կատարել: Ձեռնադրումից հետո ֆակիրը ստանում է կոչտ բրդից պատրաստված քուրձ, որն անվանում են խարկա: Գճանակեցության ուղին կարող են բռնել նաև կանայք և դառնալ ֆակրայա: Ֆակրայաները Շեյխ Ադիի սրբավայրում ծառայող միանձնուհիներն են, որոնք, թողնելով աշխարհիկ կյանքը, բնակվում ու ծառայում են սրբավայրում:

Ներկայումս Լալեշում բնակվող և Շեյխ Ադիի տաճարում և եզրիական այլ սրբավայրերում ծառայող քոչակները եզրիական հասարակության մեջ ձևավորում են ոչ ժառանգական խավ: Նախկինում քոչակ են դարձել միայն հոգևորական կաստաների ներկայացուցիչները: Հետագայում սահմանափակումները վերացել են, և տարբեր կաստաներից ծագող եզրիները սկսել են համալրել քոչակների շարքերը: Քոչակների գործառույթը ժառանգական չէ, քոչակ դառնալու համար չեն ձեռնադրվում:

Եզրիական կրոնի շատ տարբեր վերափոխվում են ժամանակակից աշխարհում: Միգրացիայի հետևանքով տարբեր երկրներում հայտնված եզրիական խմբերն ու համայնքները ստիպված են լինում հարմարվել նոր միջավայրին: Հոգևորական կաստաների ներկայացու-

ցիչներից շատերը ստիպված են իրենց հետ տեղից տեղ տանել իրենց տներում պահվող արբություններն ու մասունքները: Նոր միջավայրը իր հերթին կարող է ուղղակի կամ անուղղակի կերպով իր ազդեցությունն ունենալ որոշ իրողությունների վրա և նպաստել դրանց վերափոխմանը:

Եզդիական ազգային և կրոնական ինքնությունը կերտվել է դարերի ընթացքում տարբեր պատմական հանգամանքների ազդեցության ներքո: Եզդիները ժխտել են իրենց կրոնի սուֆիական ծագումը, իրենց կրոնն առանձնացրել են իսլամից և իսլամական հոսանքներից: Դրան հատկապես նպաստել են եզդիների հանդեպ թշնամաբար տրամադրված մահմեդականների վերաբերմունքը, պատմության ընթացքում նրանց կողմից իրականացված եզդիների հալածանքներն ու կոտորածները: Ներկայումս եզդիականության բնօրրանում և եզդիական սփյուռքում բնակվող եզդիների տարբեր հատվածներ կարող են ունենալ տարբեր ինքնություններ: Նրանց մի մասն իրենց համարում է եզդի և չի ընդունում քրդական ինքնություն, իսկ մի մասը ընդունում է քրդական ինքնություն և իրեն համարում քուրդ-եզդի կամ եզդի-քուրդ:

Սի քանի եզդիական գերդաստան ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում բնակություն են հաստատել XIX դարից: Եզդիների մի խումբ այս տարածք մուտք էր գործել 1820-1830-ական թվականների ընթացքում՝ 1826-1828 թթ. ռուս-պարսկական և 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, մյուս խումբը եկել էր 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի ընթացքում: Եզդիների մի մասն էլ, ինչպես նշվեց, այս տարածքում բնակություն հաստատեց 1914-1918 թվականներից: Հայաստանի եզդիական համայնքի ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը բնակվում է Արագածոտնի և Արմավիրի մարզերի տարբեր գյուղերում: 1970-1990-ական թվականներին բռնաճնշումների արդյունքում եզդիների հոծ խմբեր Թուրքիայից արտագաղթեցին եվրոպական երկրներ, որտեղ ևս առաջացան եզդիական համայնքներ: 1990-ական թվականներին Հայաստանից ու Վրաստանից արտագաղթող եզդիներից կազմվեցին Ռուսաստանի եզդիական համայնքները: Վերջին տասնամյակների ընթացքում եզդիական համայնքներ են ձևավորվել նաև ԱՄՆ-ի և Ավստրալիայի տարածքում:

## Գրականության ցանկ

1. Աբովյան Խ., *Եզդիիներ*, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 8, Երևան, 1958, էջ 405-412:
2. Ամրյան Թ., *Ճգնաժեսար եզդիականության մեջ*, Արևելագիտության հարցեր, N 8, Երևան, 2013, էջ 323-332:
3. Ամրյան Թ., *Այլադավաններին և այլազգիներին բնորոշելու համար կիրառվող եզրույթները եզդիական կրոնական հիմներում*, Իրան-Նամե, № 44-45, Երևան, 2012-2013, էջ 108-112:
4. Ամրյան Թ., *Ասրժոն անունները եզդիական բանասիրության մեջ*, Օրինատալիա, պրակ 11, Երևան, 2010, էջ 3-15:
5. Ամրյան Թ., *Եզդիների կրոնական աշխարհայացքը*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 312 էջ:
6. Ամրյան Թ., *Կավայների երաժշտական գործիքները որպես պաշտամունքի առարկա եզդիական հավատալիքներում*, Օրինատալիա, պրակ 15, Երևան, 2013, էջ 36-39:
7. Ամրյան Թ., *Կնքելու և չեղնադրելու ծեսերը եզդիականության մեջ*, ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները (Գիտական հոդվածների ժողովածու), № 3 (19), Երևան, 2013, էջ 213-220:
8. Ամրյան Թ., *Սուֆիական սիրո և արբեցումի գաղափարը եզդիական կրոնական հիմներում*, Արևելագիտության հարցեր, № 12, Երևան, 2016, էջ 281-294:
9. Ամրյան Թ., *Սուֆիական ինքնակատարելագործման ճանապարհի գաղափարն արտահայտող որոշ եզրեր եզդիական կրոնական հիմներում*, Բանբեր Մատենադարանի, № 24, Երևան, 2017, էջ 35-46:
10. Առաքելովա Վ., Ամրյան Թ., *Սուրբ համարվող աղբյուրների պաշտամունքը եզդիական հավատալիքներում*, Իրան-Նամե, № 42-43, Երևան, 2010-2011, էջ 18-23:
11. Ասատրյան Գ., Փոլադյան Ա., *Եզդիների դավանանքը*, Պատմաբանասիրական հանդես, № 4, Երևան, 1989, էջ 131-150:
12. Ասատրյան Գ., *Քրդագիրության հիմնադրույթներ*, Իրան-Նամե, 1996, № (2-3) 18-19, էջ 3-6:
13. Ավդալ Ա., Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Երևան, 1957, 303 էջ:

14. Ավդալ Ա., *Եզդի քրդերի հավատալիքները*, Երևան, 2006, 192 էջ:
15. Ոսկանյան Վ., *Կասպուլյի արգելքը եզդիականության մեջ*, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր 18, Երևան, 1999, էջ 236-241:
16. Սյոյան Մ., Տաճար տանող ճանապարհը, Երևան, 2013, 100 էջ:
17. Տէր-Մանուելյան Ս., *Եզդիի-կուրմանձ*, Ախալցխա, 1910, 44 էջ:
18. Açıkyıldız B., *The Yezidis. The History of a Community, Culture and Religion*, London, 2010, 283 pp.
19. Allison Ch., *Addressivity and the Monument: Memorials, Publics and the Yezidis of Armenia*, *History and Memory*, Vol. 25, No. 1 (Spring/Summer 2013), pp. 145-181.
20. Allison Ch., *The Yezidi Oral Tradition in Iraqi Kurdistan*, London, 2001, 313 pp.
21. Anastase M., *La découverte récente des deux livres sacrés des Yézidis*, *Antropos*, Vol. 6, 1911, pp. 1-39.
22. Asatrian G., Arakelova V., *The Religion of the Peacock Angel: The Yezidis and their Spirit World*, London, 2014, 142 pp.
23. Dalalyan T., *Construction of Kurdish and Yezidi Identities among the Kurmanji-speaking Population of the Republic of Armenia*, in: *Changing Identities: Armenia, Azerbaijan, Georgia (Collection of Selected Works)*, Heinrich Böll Stiftung South Caucasus, 2011, pp. 178-201.
24. De la Bretèque Estelle Amy, *Chants pour la maisonnée au chevet du défunt La communauté et l'exil dans les funérailles des Yézidis d'Arménie*, *Frontières*, Vol. 20, N 2, 2008, pp. 60-66.
25. Edmonds C., *A pilgrimage to Lalish*, Vol. XXI, London, 1967, 88 pp.
26. Guardiola A., *Yezidis in diaspora: multi-sited ethnography of a transnational socio-religious network (in French)* (Master's Thesis - without appendix), 2016/2017 academic year.
27. Guest J., *The Yezidis: A Study in Survival*, New York, 1987, 300 pp.
28. Joseph I., *Yezidi texts*, *The American Journal of Semitic Languages and Literatures*, Vol. 25, 1909, pp. 111-156, 218-254.
29. Joseph I., *Devil Worship: The Sacred Books and Traditions of the Yezidiz*, Boston, 1919, pp. 222.

30. Khanna Omarkhali, *The Kurds in the Former Soviet States from the Historical and Cultural Perspectives*, The Copernicus Journal of Political Studies, Torun, 2013, pp. 128-142.
31. Kreyenbroek Ph., *Yezidism: Its Background, Observances and Textual Tradition*, New York, 1995, 352 pp.
32. Kreyenbroek Ph., *Yezidism in Europe, Different Generations Speak about their Religion*, Wiesbaden, 2009, 246 pp.
33. Laurence Broers, *The Human Rights Situation of the Yezidi Minority in the Transcaucasus (Armenia, Georgia, Azerbaijan)*, A Writenet Report commissioned by United Nations High Commissioner for Refugees, Status Determination and Protection Information Section (DIPS), May, 2008.
34. Melkumyan H., *“Elites” Between Nationalism and Tradition: The Modernization Processes in the Yezidi Community of Armenia*, Elites and “Elites”: Transformations of Social Structures in, Post-Soviet Armenia and Georgia, pp. 175-195.
35. Neander A., *Über die Elemente, aus denen die Lehren der Yezidis hervorgegangen zu sein scheinen*, In Wissenschaftliche Abhandlungen, Ed. J. L. Jacobi, Berlin, 1851, pp. 112-139.
36. Richard Foltz, *The “Original” Kurdish Religion? Kurdish Nationalism and the False Conflation of the Yezidi and Zoroastrian Traditions*, Journal of Persianate Studies, Volume 10, Issue 1, pp. 87-106.
37. Sebastian Maisel, *Syria's Yezidis in the Kūrd Dāgh and the Jazīra: Building Identities in a Heterodox Community*, The Muslim World, Volume 103, Issue 1, January, 2013, pp. 24-40.
38. Sebastian Maisel, *Yezidis in Syria: Identity Building among a Double Minority*, Lexington Books, 2016, 204 pp.
39. Асатрян Г., *О «брате и сестре загробной жизни» в религиозных верованиях езидов*, Страны и народы Ближнего и Среднего Востока, № 13, Курдоведение, Ереван, 1985, сс. 262-272.
40. Анкоси К., *“Фарзе братіе” у Езидов*, Тбилиси, 1996, 31 с.
41. Аракелова В., *К истории формирования езидской общины*, Иран-наме, № 4, Ереван, 2006, с. 63-66.
42. Давтян С., Аракелова В., *Езиды. Вектор этничности*, Иран-наме, Ереван, т. 40, с. 75-84.



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**  
**ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

**ԹԵՐԵՉԱ ԱՄՐՅԱՆ**

**«ԵԶԴԻԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»**


*Ուսումնամեթոդական շեռնարկ*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Շապիկի ձևավորում՝ Ա. Պատվականյանի  
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է Time to Print օպերատիվ տպագրությունների սրահում:  
ք. Երևան, Խանջյան 15/55

Ստորագրված է տպագրության՝ 13.06.2018:  
Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 2.5:  
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.am](http://www.publishing.am)



ՎՐԱՏԱՐԱԿՆԻՐՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2018  
publishing.y-su.am